№ 183 Նոյեմբերի 25 Ուրբաթ 1883 Նոյեմբերի 25 Ուրբաթ № 183

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարների 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Մշակъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ **1884** ԹՒԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն տիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ».*

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Գանձակից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Լուսնկայ գիշեր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Նոյեմբերի 11-ին

Հարկաւոր եմ համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել ս. Թարգմանչաց վանքի մասին, որը Գանձակի գաւառի նշանաւոր վանքերից մէկն է։

Ս. Թարգմանչաց վանքը հիմնված է V դարում և, ինչպէս երևում է հայը Ալիշանի հրատարակութիւնից, (տես մանրամասն աշխարհագրութիւն Հայաստանի, տպագրեալ Վենետիկ 1853 թիւ) հիմնված է Մեծին Մեսրոպայ վարդապետի ներկայութեամբ, որը երկու անգամ անձամբ եկած է այդ կողմը՝ մինչև կարողացած է խաչակալի կրակապաշտ հայերին Քրիստոսի հաւատին բերել և ապա հիմնել այդ վանքը։ Կարծիք չը կայ՝ որ այդ գիւղը մինչև նրա ընակչաց քրիստոնէութիւն ընդունելը ուրիշ անուն ունեցած պէտք է լինի. բայց յետոյ անուանված է «Խաչակալ կամ Խաչափակ», ըստ որում չորս բոլորքը այժմ էլ բազմաթիւ խաչերով և խաչանշաններով փակված—պաշարված է, որպէս զի նրա «կրակի սատիկ երկրպագուները», ամեն ուրեք խաչերի հանդիպելով իրենց գիւղական ոահմանները՝ փոխանակ կռապաշտական յիշատակների՝ վերջապէս սովորեն խաչը պաշտել և այդպէս էլ եղել է։

Աւանդութիւն կայ, որ վանքի տեղը մեծ մեհեան է եղած և խեցեղէնների կտորտանք «կըղմինտրի կամ չերեպիցի» նմանութեամբ շատ են գտնվում այդտեղ։ Նոյնպէս գտնվեցան կամարից վեր թափած սրբատաշ քարեր՝ թաղված հողի մէջ, որոնք յայտնապէս մնացորդ են առաջվայ հին շէնքից։

Այդ վանքը տասներորդ դարում խախտված է. յայտնի չէ ինչ պատճառով. բայց 1029 թուականին նորոգված է փոքր գիրքով և դարձեալ անսիւն, ինչպէս երևում է, և Մեսրոպի օրօք էլ անսիւն է չինված եղել։ Նրա գաւիթը չինված է 1800 թուականին Սամուէլ եպիսկոպոսի օրօք, որը գաւթի շինութեան համար գործադրած է Վանքի դերեզմանատան տափարակ և խաչանշան քարերը, որոնք այժմ էլ երևում են պատի մէջ շարված անկանոն կերպով կամ կոտրված թէ ներսից և թէ դրսից։—Զանգակատունը չինած է 1856 թուին գանձակեցի Պողոս Ամիրխանեանցը և նրա հետ կառուցած է երեք սենեակ, որոնք կիսաւեր դրութեան մէջ էին առանց կտուրի, պատուհանների և դռների, ու նորոգվեցաւ ուսումնարանի համար 1875 թուականին,—իսկ 1876 թուին չինվեց մէկ մեծ նախասենեակ այդ սենեակներին կպած. մնացեալ շէնքերը, պարիսպները և բարենորոգումները, եկեղեցու վերանորոգութիւնը և համեստ բարեկարգութիւնը՝ ի ներքուստ և արտաքուստ, սայլի ճանապարհները, կամուրջը և զանազան կահկարասիքը, որոնք մանրամասնօրէն ցուցակագրված են, մեր խնամակալութեան օրօք են չինված։ Այդ ամենը կատարված է և կատարվում է չնորհիւ և ձեռնտուութեամբ մէկ խումբ համակրող հայ բարեպաշտների (կամուրջը և սայլուղին կառուցված է պ. Աղէքսանդր Նիկիտիչ Թայիրեանցի ծախքով, որի մասին փորագրված է քարի վրա և պէտք է դրվի այդ քարը կամրջի ճակատին, թէև նա խնդրած է չը հրատարակել այս բարեգործութիւնը)։

1872-ից մինչև 1880 թիւը վանքում կար դպրոց, ուր հայոց աշխարհիկ և դրոց լեզուով աւանդում էին մերձաւոր գիւղերի աշակերտներին գրել, կարդալ, ժամասացութիւն և թուաբանութիւն, որոց ուսուցիչն էր Թէոդորոս վարդապետ Շիրակունին և այս ուսման չնորհիւ գտնվում են մերձաւոր գիւղերում 100—120 աշակերտներ, որք սովորած են Թարգմանչաց վանքում։ Բայց հայր Թէոդորոսը, դրդմամբ մի քանի չարամիտների և այս բարի գործերին մեր մասնակցութեանը նախանձող պարոնների, թողեց այդ գործը ու փոխվեց մի այլ վանք Նոր-Բայազէտի դաւառը։ Տեղափոխութիւնը պատճառաբանեց հոգևոր իշխանութիւնը Թարգմանչաց վանքի աղքատութեամբ և թէ նա ապրուստի կողմից ապահովված չէ ու եկած նուէրներն էլ յանուն վանքի և վանական դպրոցի մեր հսկողութեամբ և նշանակված հոգաբարձուաց գիտութեամբ գործադրվում են վանքի բարեզարդութեան և վերանորոգութեան վրա, մատդրեալ կանոնաւոր վանական դպրոցի համար և այլն։—

Սկզբից մենք մասնաւոր կերպով և կողմնակի մասնակցում էինք այդ վերանորոգութեան գործին յօգուտ այն դպրոցի, որ՝ թէև նուազ միջոցներով, բայց և այնպէս օգուտ էր բերում մերձակայ բընակչաց որդւոցը գրել կարդալ սովորցնելով, բայց հանդուցեալ Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեանը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՒՍՆԿԱՅ ԳԻՇԵՐ

—

Ես արդէն վճռել էի վեր բարձրացնել նրան, բայց այդ րոպէում նա ինքը վերկացաւ։ Նրա դէմքի վրա երևում էր մի նշանաւոր հեզութիւն, և մի զարմանալի ժպիտ ներսից լուսաւորում էր դէմքը։ Վերկենալու միջոցին, կարծես թէ, նա հանդիսաւոր կերպով համբառնում էր օդի մէջ, և այնպէս էր թւում, որ նրա ոտները չէին դիպչում յատակին։ Առանց ձայն հանելու, անցաւ նա սենեակի միջով, յետոյ հանդարտ ու հանդիսաւոր կերպով կանգնեց, երեսը դարձնելով դէպի լուսինը, որի ճառագայթները լուսաւորում էին նրան, և անպատմելի կերպով խօսեց ինձ հետ։

—Ի՞նչ կը մտածի Լէօպոլդը Օլգայի մասին,—տխրագին հեզութեամբ ասաց նա։

Նա խօսում էր թէ իր և թէ իմ մասին երբորդ դէմքով և մեր երկուսիս ևս կոչում էր իսկական անուններով։ Իմ սիրտը դողարեց խռովվելուց, և ես լուռ նայում էի նրա վրա։ Ինձ համար այժմ պարզ էր, որ ես տեսնում էի իմ առջև մի լուսնահար կին կամ, որպէս ասում են մեր գիւղացիները, լուսնից հիւանդացած կին։ Ես դեռ ևս մեքենաբար բռնած ունէի ձեռքումս իմ հրացանը։ Նա մօտեցաւ ինձ և ձեռքը մեկնեց, որ առնէ ինձանից հրացանը։ Ես վախենալով, յետ քաշվեցայ։ Նրա շրթունքի վրա երևաց մի ծաղրական ժպիտ։

—Լէօպոլդը կարող է հանդիստ լինել,—ասաց նա,—նա կարող է իր հրացանը տալ Օլգային, պարար Օլգան աւելի լաւ է տեսնում, քան թէ նա։

Բայց երբ ես չը վստահացայ տալ նրան հրացանը, այլ տարայ նրան պատի մօտ, այդ միջոցին նա յօնքերը խոժոռեց և զայրացած կերպով խլեց հրացանը իմ ձեռքից, որպէս մի մարդ, որ բարկանում է, թէ ինչու չեն հաւատում նրան, և կամենում է ապացուցանել, թէ սխալվում են նրա մասին։ Նա խիստ դիւրաշարժ կերպով հեռացաւ ինձանից և բռնած ունէր հրացանը այնպէս, որպէս բռնում են որսորդները։

—Էլ ինչ վտանգ կայ դրանում, ասաց նա և զգուշութեամբ ցած թողեց չախմախը, յետոյ ղբրեց հրացանը անկիւնում։

Ես այժմ սկսեցի ազատ շունչ քաշել։

—Լէօպոլդը թող չը համարձակվի մտածել մի որ և իցէ վատ բան Օլգայի մասին, ես մինչև անգամ խնդրում եմ նրան դրա համար,—գոչեց նա. և արտասուքը արդէն դուրս ցայտեց նրա թերթերունքի տակից։ Նա չոքեց ծնկների վրա և ձեռքերը մեկնեց դէպի ինձ։—Նա ոչ ոքին թող չը համարձակվի հաղորդել այն, ինչ որ կը լսէ,—կամաց և խորհրդաւոր կերպով շարունակեց նա,—մինչև անգամ հէնց իրան՝ Օլգային ևս թող չը յայտնէ, եթէ ոչ, Օլգան ամօթից կը սպանէ իրան։

—Ոչ ոքին չեմ ասի,—պատասխանեցի ես։ Իմ ձայնը դողում էր։

—Ոչոքին,—ուրախացած կրկնեց նա։

Խորին սրտաշարժութեամբ ես թեքվեցայ դէպի նա և կամենում էի բարձրացնել նրան։ Նա իր գեղեցիկ գլուխը շարժեց և կամաց խոնարհեցրեց նրան կուրծքի վրա։

—Հիմա պէտք է Լէօպոլդը բոլորը գիտենայ, բոլորը,—ասաց նա հանդարտ կերպով։

—Ոչ,—ձայն տուի ես,—ոչինչ մի պատմիր, եթէ այդ կարող է դառնացնել քեզ։ Ինձ պէտք չէ գիտենալ քո գաղտնիքները։

—Լէօպոլդը սխալ կարծիք կունենայ այն ժամանակ Օլգայի մասին, նաև այժմ տարակուսութեան մէջ է նրա մասին, տխրութեամբ պատասխանեց նա։—Հարկաւոր է, որ Օլգան պատմէ նրան բոլորը։ Օլգան թեթեւամիտ կին չէ, ոչ, նա միայն սարսափելի անբախտ է։ Բայց նա առաջ թող երդում տայ Օլգային, որ լուռ կը մնայ։ Կը երդվի՞ արդեօք նա։—Հարցնում էր նա չը նայելով իմ վրա։

Այո՛,—պատասխանեցի ես։

Յանկարծ իմ շունը մօտեցաւ նրան, հոտ քաշեց նրանից, խռպոտ ձայնով հաչեց և ատամները ցոյց տուեց։ Օլգան թեքվեցաւ դէպի շունը, որ փայփայէ նրան, բայց շունը դողաց, և վախենալով, թաքնվեցաւ մահճակալի տակ։

—Ես պէտք է, պէտք է բոլորը պատմեմ նրան,—հոգւոց հանելով ասաց նա,—եթէ ոչ, դա լաւ վախճան չի ունենայ։ Ես չեմ կամենում, որ Լէօպոլդը վատ կարծիք ունենար Օլգայի մասին, որը այնքան խղճալի դրութեան մէջ է։

Նա ծնկերի վրա սողալով մօտեցաւ ինձ, գլուխը խոնարհեցրեց մահճակալի սիւնի վրա, և մի առանձին երկիւղած հեզութեամբ ձեռքերը դրեց իր կուրծքի վրա։

—Ես գիտեմ, որ նա կը հասկանայ Օլգային, և այդ պատճառով ես կամենում եմ բոլորը պատմել նրան։

Ես զգացի մի թեթև սոսկում։

—Լէօպոլդը թող հանդիստ լինի,—մտերմութեամբ շշնջաց նա,—ոչինչ չի խօսվի կատարված յանցանքի մասին։ Օլգան իր յօժարութեամբ ոչոքին վնաս չի տուել։ Նրա պատմութիւնը մի տըխուր պատմութիւն է միայն, և աւելի ոչինչ։ Լէօպոլդը թող չը համարձակվի լաց լինել։

Ես թիկն տուի պատին և նայում էի նրա վրա, իմ աչքերը վառվում էին, կոկորդս չորացել էր։

—Ես յօժարութեամբ պիտի պատմեմ նրան։ Նա գիտէ կանանց բնաւորութիւնը...

Ես ակամայ շարժեցի գլուխս։

Օլգան չէ ընդունում իր վրա մի ուրիշ մեղք, բացի նրանից, որ ինքը կին է և կրթված է այնպէս, որպէս կրթում են կանանց, միայն զուարճութեան առարկայ լինելու համար, բայց ոչ թէ աշխատանքի համար.—Կինը բոլորովին առանձին էակ է,—շարունակեց նա, և խօսքերը կարծես հոսում էին նրա շրթունքից,—կինը աւելի հեռու չը գնաց այն սահմանից, որ նշանակել էր նրա համար բնութիւնը, և որքան լաւ է նա, այնքան էլ վատ է քան թէ տղամարդը։ Ես ասում եմ—լաւ և վատ, որպէս այդ խօսքերը հասկանում են մարդիկ։

Նա ժպտաց։

—Իր բնութեան համեմատ, ամեն ոք մտածում է միայն իր մասին, և այդպէս էլ և կինը սիրոյ մէջ ամենից առաջ խորհում է իր օգտի ու իր մտիփառութեան համար։ Չէ որ պէտք է նրան ապրել, բայց նա կարող է ապրել առանց աշխատանքի, միայն ծառայելով որպէս մի միջոց տղամարդի զուարճութեան համար, և դրա մէջն է կայանում նրա բոլոր զօրութիւնը և նրա բոլոր դժբախտութիւնը։ Ուղիղ չէ։ Սէրը մի շռայլութիւն է, որ կարող է կինը մատակարարել տղամարդին, իսկ կնոջ համար դա օրենքն հացի միջոց է։ Բայց նա, որ սկզբում վարել է ողորմելի կեանք, ժամանակով կը պահանջէ կեանքից աւելի շատ բան։ Նրա մէջ զարթնում է այն ցանկութիւնը, որքան կարելի է աւելի բարձրացնել ուրիշների վրա իր երեսը, որով նա այնքան պարծենում է։ Որպէս տղամարդի մէջ, այնպէս էլ կնոջ մէջ մտիփառութիւնը միակերպ է, բայց կնոջը հարկաւոր է միայն իրան ցոյց տալ, և արդէն ստրուկները ու երկրպագուները նրա ոտների մօտ ընկած կը լինեն։ Նրան հարկաւոր է միայն գեղեցիկ լինել, և այնուհետև էլ ինչ պէտք է նրան մի բան սովորել, էլ ինչ պէտք է աշխատել։ Բայց գալիս է մի ժամանակ, երբ կինը պարզ հասկանում է, թէ ինչ է տղամարդը և ինչ է նշանակում տղամարդի սէրը, և այդ ժամանակ, իր հերթում, նրան ևս տիրում է մի անբացատրելի ծարաւ սիրելու և սիրված լինելու,—այն ժամանակ, երբ այդ այլ ևս անկարելի է։ Եւ այդպէս, նրա դառն ճակատագիրը ծանրանում է նրա վրա։ Դա մի դժբախտութիւն է առանց կարիքի,

և վերջերումս Գէորգ Դ. Կաթողիկոսը զանազան թղթերով և կօնդակներով պաշտօնապէս պարտաւորացրին մեզ շարունակել սկզբնաւորած գործը ձեռնտուութեամբ համակրող ազգայնոց՝ մինչև բոլոր դպրոցական և տնտեսական շինութեանց աւարտելը և արդիւնաւորելը, նաև հոգալ բոլոր նախապատրաստութեանց համար, որպէս զի մօտիկ ապագայում (1884—1886) կարելի լինի առանձին կանոնադրութեամբ և ծրագրով բանալ վանքում վանական դպրոց և յատուկ եկեղեցական բարեկիրթ պաշտօնեայք դաստիարակել մերձաւոր տարարաղդ գիւղերի համար, որք բոլորովին զուրկ են արթուն և բարեբարոյ հովիւներից, որոնք իրենց ազիտութեամբ մեծ հեղինակութիւն և ազդեցութիւն ունեն դեռ ևս գիւղացւոց մէջ և հասարակական գործերում: Այս վանական դպրոցը պէտք է համարվի իբրև նախակրթարան կամ պատրաստական դասատուն Ներսիսեան դպրոցի և Էջմիածնայ ճեմարանի: Եթէ այդ դպրոցում ուսումն սկզբնաւորողները միջոց ունեցան կատարելագործել իրենց ուսումն Ներսիսեան դպրոցում կամ ճեմարանում՝ շատ գեղեցիկ, եթէ ոչ, գոնէ նրանք աւելի զարգացած կը լինեն, քան այժմեան տիրացուներն ու քահանաները:—Բայց եթէ վանական դպրոցից աւարտող-դուրս եկողը չէր կամենայ հոգևոր կոչման մէջ մնալ, այլ վաճառականութեամբ կամ արուեստով կը պարապէր, այն ժամանակ զարձեալ օգտակար կը լինէր հասարակութեան իբրև բարեկիրթ անդամ՝ տեղեակ իր ազգային և եկեղեցական պատմութեան ու խորհուրդներին և այլն:—Բացի այս, մենք դիտաւորութիւն ունենք մօտիկ ձորից ժողովել աղբիւրների ջուրը, (որը աւելանում է օրից օր անտառի վրա հսկելու պատճառով) և խողովակներով բերել «հրանց» գերեզմանների մօտի փապարակ տեղը, մեծ ջրամբար շինել, ուսեալ այգեպան հրաւիրել, պտղեղէնների և բուսեղէնների այգի անկել վանքի պարսպից դուրս, որի համար ցանկապատված է մէկ կտոր հող, որպէս զի ուսանողք սովորէին և բուսաբանութեան արուեստը, որքան գիւղատնտեսական պահանջը և կեանքը ներում է, և վանական դպրոցից դուրս եկողը միայն իր շարականի և ժամասացութեան յուսով չը բաւականանար, այլ իմանար և ապրուստ ճարելը իր հողից արդիւնք ստանալով ժամանակակից դիտութեան չնորհիւ:—

Այս ամենը մենք անում ենք ոչ թէ միայն մեր սեպհականութիւնից կամ վանքի արդիւնքից, (որը տարեկան հասնում է 35—40 բուբլու) այլ կամաւոր նպաստիւք մի քանի բարեմիտների, որք քաջ տեղեակ լինելով մեր գաղափարներին՝ մարդասիրաբար և անկեղծ համակրութեամբ խրախուսում ու օգնում են մեզ այս ծանրակշիռ և դժուար ասպարիզում՝ ի փառս եկեղեցւոյ և յօգուտ հասարակութեան և որոց անունները ուրած ծախքերի հաշիւը կը հրատարակվի տպագրութեամբ դպրոցի բացված ժամանակներում, առանձին տետրակով:—

Մենք միայն յարատև աշխատում ենք խոհեմ խնայողութեամբ և արդիւնաւորութեամբ գործադրել նուէրները՝ խորհրդակցելով հմուտ անձանց հետ և երբ նուազում են նուէրները՝ մեր սեպհականութիւնից շարունակում ենք գործը և ամենահարկաւոր շէնքերը վերջացնելու հոգս ենք տանում որքան ժամանակը և պարագաները ներում են:—Այնքան հեռաւորութեամբ, զրկված ամեն վայելչութիւնից ու յարմարութիւնից ահա 8—9 տարի է ծանր ծախքերով ամարանոց ենք դնում վանքը՝ յատուկ գործը յառաջացնելու և վերջաւորելու մտօք, մինչդեռ մենք քաղաքից մօտիկ տեղերում աւելի յարմար ամարանոց ունենք, որը աւելի ձեռնտու է մեր առևտրական գործերի համար:

Թարգմանչաց վանական դպրոցի ծրագրի ու կանոնադրութեան հաստատվելը և նրա բանալը 1884 կամ 1886 թուին կը լինի՝ նոր Կաթուղիկոսի ընտրութիւնից յետոյ:—Ցեսնենք Էջմիածինը և նրա ճեմարանը ինչպիսի գիտնական վանահայր—վարդապետ է կարողանում տալ, որ արդիւնաւոր կերպով տանի այս գործը միւս ևս մէկ վարժապետի հետ, որ ուսուցանելու է ռուսաց լեզու և ուրիշ առարկայ:—Այժմ վանահայրութեան պաշտօնը հոգևոր տեսչութեան հրամանով կատարում է ժամանակաւորապէս խաչակապի ծխական քահանայ տէր Յովհաննէս Տէր Աւետիքեանը, մենք խնամք ենք տանում միայն նրա տնտեսական մասի համար:

Հին ննջեցելոց ոսկորներ երևեցան պարիսպների, սենեակի, սարդափի հիմքերը փորելիս և վանքի բաղը հաւասարելիս, որոնք ամսոյս 11-ին հանդիսաւոր կերպով ամփոփվեցան նոցա համար պատրաստված մահարձանում և չորս կողմը բոլորաձև հող ածուից վարդերով և ուրիշ ծաղիկներով զարդարելու համար:—

Կառուցված նոր սենեակը իր սարդափով և խոհանոցով պատրաստվում է մէկ վարժապետի համար: Նոյն ձևով պատրաստվելու է շինութեանց հարաւային կողմը վանահօր համար յարմարաւոր բնակարան, երեք սենեակից և յետոյ շինվելու են մէկ լայն բալկօն, գոմ, ճանճանոց, բաղանիք և ձիթհանք, որոնցից վանական դպրոցը կունենայ մշտական արդիւնք:—

Մի քանի ծերունի խաչակապցիք և Սինոդի անդամ հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոս Մուշեղեանը, որը իբրև քաջածանօթ Թարգմանչաց վանուց աւերակներին, եկած էր 1877 թուին անձամբ տեսնելու մեր գործը,—հիմնվելով աւանդութեան վրա թէ՝ եկեղեցւոյ ճախակողմեան խորանի գմբեթում թաղած է հին ժամանակներից զանազան գրքեր, մատեաններ, անօթ և այլն: Մուշեղեանցը և յետոյ ևս ցանկացանք հետազօտել այդ հետաքրքիր բանը, հմուտ վարպետ դեռ չէ պատահում, որ սիրտ անէի ձեռք տալ խորանին առանց վնաս բերելու բոլոր շինութեանը:

Աւելորդ չեմ համարում յիշել, որ հէնց սկսեցինք ձեռք տալ դպրոցական բարեկարգութեանը և վանական վերանորոգութեանը՝ շատերը մեր ծանօթներից և ոմանք անծանօթ հայեր կարծելով թէ մենք յատուկ վանուց նորոգութեան վրա ենք հոգում, ուր մի քանի տարի առաջ անասնոց ձմերանոց էր և եկեղեցին մտնել անկարելի էր ապականութեան և մթութեան պատճառաւ՝ (առանց պատուհանների և ծխով սևացած) շատ տեղերից ուղարկեցին տէրունական պատկերներ, անօթներ, զարդեր և այլն, նմանապէս Թիֆլիսի, Աստրախանի և Շամախու թեմական առաջնորդները 1878—1881 թուերին ուղարկեցին բաւականաչափ անօթներ, զգեստ և այլն, որոց աղագաւ մի պարոն լրագրում գրել էր թէ՝ «Տէր-Ներսէսեանցը Թարգմանչաց աւերակում նոր կրաքատուն է շինում և իր համար ամարանոց է պատրաստում»: Բայց մենք հաղիւ թէ եկած նուիրեալ պատկերներից և զարդերից քառորդ մասը թողած ենք վանքում, մնացեալը բոլորը բաժանած ենք մերձաւոր անչուք և աղքատ գիւղական եկեղեցիներին և վանօրէից՝ սկսեալ Գանձակի և Նուխվայ վիճակներից մինչև Ղազախ-Շամշադինայ և Նոր-Բայազեդի կողմերը, որոց կարօտութիւնը և անվայելուչ կերպարանքը սարսափելի է:

Մոռացայ ասել, որ վանական դպրոցը ունենալու է և մէկ մատենադարան, որը հարստացած է կարևոր գրքերով՝ գնած և զանազան հեղինակներից և ուսումնասէր պարոններից ընծայած, որոց թիւը հասնում է արդէն 300 հատոր օրինակի,—բացի այս մօտ 300—400 դասական և պատմական գրքեր 1875 թուից մինչև ցօրս ընծայված են թէ վանքի դպրոցի աշակերտներին և թէ մերձաւոր գիւղերի ծխական ուսումնարանների աշակերտներին, որք սովորաբար հրաւիրվում են ամեն տարի վարդանանց ասնը այստեղ հանդիսաւոր կատարելու և յառաջադէմները մրցանակ են ստանում:

Շատ գործեր կան յառաջացնելու, երանէ թէ մեր մի տեսակ «ազգացեցները» չը խանգարէին իրանց վատ սովորութեամբ մեր սկզբնաւորած և շարունակվող գործը, յիմար ու խարդախ լուրեր տարածելով, թէև մեզ ճանաչողները ամենևին ուշադրութիւն չեն դարձնում վայրաբանութեանց:

Ն. Տէր-Ներսէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 21 Նոյեմբերի

Ներկայ տարվայ «Մշակի» 177 համարում զետեղված անդամ յանձնաժողովոյ առաջնորդական յանձնարարութեանց Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեանի նամակի առթիւ բարեհաճեցէք չնորհել երկտող զրութեանս մի անկիւն ձեր լրագրի մէջ:

Արժանապատիւ հայր Մուշեղ քահանայի յիշեալ նամակը իսկապէս մի հրաւէր է Մողնուոյ եկեղեցւոյ ծխական և ժամաւոր ժողովրդականներին նոյն եկեղեցւոյ երեցփոխան ընտրելու մասին, սակայն ինքն ըստ ինքեան այդ պարզ և հասարակ հրաւէրը արժանապատիւ հայրը համեմել է մի քանի իրա կոչման անվայել, չասենք զրպարտութիւններով, այլ վերին աստիճանի անվայելուչ բացագանչութիւններով, որ մեզ առիթ է տալիս, ի զգուշութիւն հայ հասարակութեան, անելու մի քանի նկատողութիւններ:

Արժանապատիւ հայրը, հիմնվելով այն սկզբունքի վրա թէ եկեղեցի և ուսումնարան մի մարմին են, առաջարկում է Մողնուոյ ժողովրդականներին դալ մի արժանաւոր տնտես-երեցփոխան ընտրելու զէթ նրա համար, որ այդ եկեղեցին չնորհել է ազգին Սբ. Գայիանեան օրիորդական դպրոց, «որին նուիրել է մի հոյակապ ուսումնական աճելու, առանց փրկութեան: Օլգան կարող էր լինել լաւ կին. նա ունէր խելացի գլուխ և բարի սիրտ, բայց... Պէտք է կրթել կնոջը այնպէս, ինչպէս կրթում են տղամարդին, այն ժամանակ նա կը լինի իր ամուսնի ընկերը: Լէօպոլդը կասկածում է այդ խօսքերի մէջ:

—Մեզ համար լաւ չէ հեռանալ բնութիւնից,—պատասխանեցի ես, արտայայտելով այն, ինչ որ վաղուց իմ սրտումն էր:—Կինը պէտք է սովորի լինել լաւ մայր: Բոլոր մնացածը ցնորք է, խաբէութիւն է կամ...

—Ժամանակները փոխվելով, տղամարդը նոյնպէս փոխվեցաւ,—պատասխանեց նա հեզութեամբ,—նա թողեց անատնականութիւնը, և այժմեան տղամարդը, որը խորհում է, դատում է և գիւտեր է անում, որը պարապվում է արհեստներով ու արուեստներով, պահանջում է ուրիշ տեսակ կին, քան թէ այն տղամարդը, որը, մի քանի հազար տարի առաջ, առանց ցանելու, կերակրվում էր երկրի պտուղներով, կամ դայլի նման խեղդում թռչուններին ու գազաններին:—Բայց ես կամենում եմ պատմել Լէօպոլդին իմ պատմութիւնը: Ես բոլորը կը պատմեմ նրան, կը պատմեմ, թէ ինչպէս այդ ամենը պատահեց: Ես խիստ պարզ կերպով տեսնում եմ իմ առջև անցեալը. բոլոր հանգամանքները կատարելապէս պարզվել են իմ աչքում, և ես ազատ կարող եմ կարդալ, թէ ինչ կայ ամեն մի մարդու սրտի մէջ. տեսնում եմ և Օլգային, կարծես թէ օտար մէկը լինէր նա, և չեմ զգում դէպի նա ոչ սէր և ոչ ատելութիւն:

Նա տխուր կերպով ժպտաց:

—Ես տեսնում եմ Օլգային երեխայական հասակում: Նա փոքրիկ, սիրուն աղջիկ էր, զողտրիկ և արևից այրված ձեռիկներով, և սևորակ, խիտ թերթերունքներով պատած, հարցասէր աչքերով: Գերունի զռնապան Օհաննէսը, որից միշտ դինու հոտ էր փչում և որը միշտ կարմիր աչքեր ունէր, կասես թէ, շատ լաց լինելուց, այդ մարդը ամեն անգամ նրա մօտից անցնելով, կը վեր առնէր նրան իր ձեռքերի վրա և մատներով փաղաշարար կը փայփայէր նրա թշերը: Մի անդամ փոքրիկ աղջիկը կանգնած էր պատշգամբի վրա, իսկ հիւրերի սենեակում նրա մօր մօտ նստած էր մեր երիտասարդ հարևանը, որին տիկինները միշտ հաճութեամբ էին ընդունում իրանց մօտ: Լուսամուտները բաց էին, և Օլգան լսեց, որ երիտասարդը ասում էր նրա մօրը. այո, դա, ճշմարիտն ասած, մի փոքրիկ Վենեռա է, զուք կարող էք պարծենալ այդ աղջիկով, որպիսի լաւ կին կը դուրս գայ դրանից:—Օլգան հասկացաւ, որ խօսում էին իր մասին, նա ամօթից չառագունեցաւ և փախաւ այդտեղ: Այստեղ նա հանդարտ զբօսնում էր ծաղիկների մէջ, քաղում էր վարդեր, շահպրակ և մեխակներ, զարդարում էր նրանցով իր ծամերը և յետոյ սկսում էր ուշադրութեամբ ու հպարտ կերպով նայել իր պատկերին լճակի մէջ: Լճակի մօտ կանգնած էր սիրոյ աստուածը մարմարիօնից. նա նայում էր նրան, և իր մէջ մտածելով, ասում էր. Երբ ես կը մեծանամ, կը լինեմ այդպէս գեղեցիկ, ինչպէս դու: Զմեռնային երեկոները, վերջալոյսի ժամանակ, պառաւ դայեակը, Կայեատնօվնան, կը նստէր կանաչագոյն մեծ բազկաթոռի մէջ, որտեղ մեռել էր պապը, և որը այն օրից ազդում էր երեխաների մէջ յարգանք, խառն երկիւղի հետ, և կը պատմէր նրանց հեքիաթներ: Որքան աւելի մթնում էր և որքան աւելի մռայլվում էր Կայեատնօվնայի փաղաքշական դէմքը, այնքան աւելի հետաքրքրութեամբ հաւաքվում էին նրա շուրջը երեխաները, և այնքան աւելի կամաց էին շշնջում միմեանց հետ: Օլգան սովորաբար դնում էր իր գլուխը դայեակի ծնկների վրա, աչքերը խփում էր,—և նրան այնպէս էր թւում, որ բոլորը, ինչ որ պատմում է պառաւը, իսկապէս կատարված բան է: Նա միշտ երևակայում էր իրան մի գեղեցիկ թագուհի, որը նաւով լողում է Սև ծովի վրա, կամ թնաւոր ձիու վրա նստած, բարձրանում է երկինքը: Բայց մի անդամ, լսելով Դիժ—Օհանիկի արկածները, որը ազատեց թագաւորի աղջկան, Օլգան, իսկոյն գլուխը բարձրացնելով, տհաճութեամբ աղաղակեց. ես թագաւորի աղջիկ չեմ, Կայեատնօվնա:—Իսկ ամառը, երբ մանր աղնուականների երեխաները խաղում էին սօսիների ներքոյ, Օլգան ևս վազում էր նրանց մօտ, և երբեմն միասին խաղում էին հարսանիք: Տղաներից մէկը իրան ներկայացնում էր քահանայ: Օլգան դնում էր գլխին մի պսակ, հիւսած կաղնու տերևներից, և կատարում էր հարսի դեր: Բայց նա միշտ ասում էր իր փեսային. իմ փեսան պէտք է լինի գոնէ դուքս, բայց ես շատ գեղեցիկ եմ մանր աղնուականի համար:—Օլգան մեծացաւ, բարձրահասակ և վայելչակազմ օրիորդ դարձաւ: Մի ժամանակ փոքր ինչ հաղում էր նա. մէջքը փոքր ինչ կորանում էր: Որպիսի ծանր հոգս էր այդ մօր համար:—Օլգա,—շատ անդամ ասում էր մայրը,—դու կորաքամակ կը դառնաս, այլ ես քեզ համար ամուսին չեմ գտնի, և ստիպված կը լինես ապրել աշխատանքով, ինչպէս ապրում է սապատոր Յէլէստինան:—Երբ հարևանները հիւր էին լինում նրա մօր մօտ և նստած էին լինում թէյի սեղանի շուրջը, Օլգան ամենի հաճոյքը կատարում էր և ինքն էր բերում նախաճաշելիքներ ու պակսիմաթներ: Նա դեռ մանր էր գալիս այն ժամանակ անդրավարտիքով, որ ասղնեգործած էր նուրբ հիւսուածքով, և թանձր գիսակները իջնում էին մէջքի վրա: Հէնց որ տիկինները ըսկսում էին խօսել իրանց զուսարների մասին կամ ուրիշ աղջիկների մասին, երբ դատում էին նրանց ապագայի մասին, այդ ժամանակ ամբողջ խօսակցութիւնը միայն այն բանի վրա էր լինում, թէ ինչպէս պէտք էր տնօրինել նրանց ապագան, այսինքն՝ նրանց ամուսնութիւնը,—այդ բոլորը կատարվում էր իսկ և իսկ նոյն ձևով, որպէս տղամարդները խօսում են, թէ ինչպէս պէտք է ծառայութեան մէջ մտնեն: Տեղային քահանայի աղջիկը ուսում էր առնում մայրաքաղաքում և պատրաստվում էր լինել մի տան մէջ մանկանց դաստիարակուհի:—Դա շատ բնական է,—ասում էին տիկինները,—խեղճ աղջիկը չափազանց ոգեղ է, նրան պակասում են մինչև անդամ առջևի առամները. նրան ուրիշ ոչինչ չէ մնում անելու:—Պատահեց որ, ամառը եկաւ. նա անցկացնելու իր ծնողների մօտ, և այն ժամանակ բոլորը զարմանում էին նրա հմտութիւնների վրա աշխարհագրութեան մէջ, պատմութեան մէջ, բնական գիտութիւնների մէջ և օտարազգի լեզուների մէջ: Բայց Օլգային սովորեցնում էին միայն պար գալ ձիով մանգալ, երգել, երգեհօնի վրա ածել, նկարել, ասղնեգործել և ֆրանսիական լեզու—բոլոր այն բաները, որոնք կարող են միայն զուարճութիւն պատճառել կնոջ ամուսնին, բայց երբէք չեն տալ մի կատար հայ: Այդ բոլորի հետ միասում էին նաև մօր բարի խրատները:—Աչքերդ մի խաղացրու,—ասում էր նա Օլգային,—երբ որ քեզ հետ խօսում է մի տղամարդ. պատասխանիր նրան քաղաքավարութեամբ ու կարճ կերպով, և չուտով կտրիր խօսակցութիւնը: Որքան աւելի դուք թանգ կը ծախես քեզ, այնքան աւելի բարձր կը գնահատեն քեզ:—Միթէ այսպէս չէն խօսում և զանազան ապրանքների մասին: Անդադար ասում էին Օլգային, թէ նա ամենադեղեցիկ աղջիկն է ամբողջ շրջակայքում, և երբ ծնողները առաջին անդամ տարան նրան պարահանդէս, ամենքը միաձայն կոչեցին նրան գեղեցկուհի: Ամեն անդամ, երբ նրան հիւր էին տանում մի տեղ, կամ կիրակի օրերը եկեղեցի էին տանում, միշտ, որքան կարողանում էին, զարդարում էին նրան, նոյնպիսի խնամքով, որպէս ժապաւէններով հիւսում են ձիաների բաշը, որոնց տանում են տօնավաճառում վաճառելու համար: Մայրը երբէք փորձ չէր խնայում, երբ պէտք էր զարդարել իր գեղեցիկ աղջկան: Երբ Օլգան հասարակութեան մէջ էր մտնում, նա նկատում էր, թէ ինչպէս բոլորը շշնջում էին միմեանց հետ. նա տեսնում էր երիտասարդների փայլող աչքերը, որ յառած էին լինում իր վրա, լսում էր նրանց խօսքերը, որ լի էին քաղցրութեամբ, և փոքր առ փոքր սառցային կարծր կեղևը պատում էր նրա ջերմ ու մանուկ սիրտը:

(Կը շարունակվի)

նարանական չինութիւն և օժանդակել է սրան իր գոյութեան օրից մինչև այսօր շատ նիւթական և բարոյական միջոցներով.» ապա բացագանչում է թէ «այժմնա (եկեղեցին) անուշադիր է թողնված նոյն իսկ ուսումնարանի մէջ գործող երիտասարդութիւնից, ինչպէս մի քանի տարի առաջ նրա հազարները և 10 հազարները չռայլողներից:»

Թէև Թիֆլիսի հայ հասարակութեանը քաջ ծանօթ է սբ. Գայիանեան օրիորդական ուսումնարանի հաստատութեան պատմութիւնը, բայց և այնպէս մենք պարտք ենք համարում յիշեցնել այդ և հայր Մուշեղ քահանային, որ, ինչպէս երևում է նրա նամակից, կամենում է իրան անտեղակ համարել:

Ուսումնարանը հաստատվել է 1869 թ. միայն նեթ երջանկայիշատակ Գէորգ Կաթողիկոսի կամքը, նախկին առաջնորդ բարձր սրբազան Մակար արքեպիսկոպոսի օրհնութեամբ և մի խումբ անձինքների շնորհիւ, որ այդ միջոցին արտաքուստ ոչ մի տեղից նիւթական ապահովութեան ակնկալութիւն չունէր, ուր մնար որ Մողնոյ եկեղեցւոյ վրայ դներ իր յոյսը: Մինչև անգամ ուսումնարանը բաղդի բերմամբ միայն յանուն Մողնոյ եկեղեցւոյ կոչվեցաւ և միմիայն 1871 թ. տեղւոյս կոնսիստորիայի հրամանով ստացաւ եկեղեցւոյ արդիւնքից առաջին տարի 300 ր. օժանդակութիւն, իսկ յետագայ տարիները—400 ր.: Ուսումնարանը հաստատութեան օրից մասնաւոր տոնու�ն էր զետեղված, իր արդիւնքից հոգալով բնակարանի ծախսը և միայն 1875 թ. սեպտեմբերին տեղափոխվեցաւ ներկայ բնակարանը, որ շինվեցաւ նախկին երեցփոխան հանգուցեալ Բարսեղ խօջայեանի օրով և որ 1878 թ. եղբարց Ռօտինեանց 5000 ր. նուէրով և ուսումնարանի սեպհական գումարի 3000 ր. ծախսով ընդարձակվեցաւ: Բացի այս երեք հազար ր. ծախսից համարեա ամենայն տարի ուսումնարանի չէնքի մէջ լինում է նորոգութիւն և շինութիւն, որ կատարվում է ուսումնարանի սեպհական գումարից և սրանից էլ բազմիցս ծախս է եղած եկեղեցւոյ բակի և պարտիզի շինութեան վրա, որ իսկապէս եկեղեցւոյ պարտականութիւնը պէտք է լինի:

Այսպէս Մողնոյ եկեղեցին իսկապէս միայն 1875 թ. ճանաչել է սբ. Գայիանեան ուսումնարանը իբրև իր ծխական ուսումնարան, զետեղելով նրան իրա բակի մէջ և 1871 թ. մասնարելով իր արդիւնքից տարեկան 400 ր. օժանդակութիւն, որի փոխարէն ուսումնարանը պահել է և պահում է մինչև այժմ 10 որդեգրուհի ձրիապէս յանուն եկեղեցւոյ՝ սրա միաբանութեան, ծխական և ժամաւոր ժողովրդականների աղջիկներից, ընտրութեամբ և առաջարկութեամբ նոյն իսկ միաբանութեան:

Սրանից յետոյ արդեօք կարելի՞ է ասել այն, ինչ որ հայր Մուշեղը ասում է, թէ եկեղեցին նուիրել է (մասամբ) հոյակապ շինութիւն և օժանդակել է սրան իր գոյութեան օրից (1871 թ., երկու տարուց յետոյ՝ այն էլ փոխադարձ օժանդակութեամբ) մինչև այսօր շատ նիւթական և բարոյական միջոցներով: Նիւթական օժանդակութիւնը, ինչպէս տեսնում ենք, եղել է փոխադարձաբար և յընթացս 14 տարվայ գոյութեան ուսումնարանը եկեղեցուց ստացել է ընդամենը 3,500 ր., որովհետև դեռ ևս 3 տարվայ 1,200 ր. ապառիկ ունի ստանալու եկեղեցուց: Բայց թէ ինչի՞ մէջ է կայացած եղել եկեղեցու կողմից բարոյական օժանդակութիւնը՝ ուսումնարանի վարչութեանը այդ բնաւ յայտնի չէ: Գուցէ հայր Մուշեղը բարոյական օժանդակութիւն համարում է այն, որ տարին մի քանի անդամ միաբանները պատարագ են մատուցանում և հոգեհանգիստ կատարում վարչութեան խնդրանքը, բայց այդ օրերը ինքն ըստ ինքեան տօն օրեր են լինում (սբ. Գայիանեան և սբ. Վարդանանց) կամ կիրակի օրեր (ուսումնարանի տարեդարձ), երբ նրանք այնպէս էլ պարտաւորված են լինում պատարագ մատուցանելու. չենք կամենում այստեղ յիշել, որ դրա համար էլ նրանցից տրանջողներ են եղել և ուսումնարանի վարչութիւնից ժամոց պահանջելիս են եղել: Բայց միթէ այդ ուսումնարանական հանդէսները բազմաթիւ ժողովուրդ քարշելով դէպի Մողնոյ եկեղեցին նպաստած չեն թէ եկեղեցու արդեանց մոմավաճառութեամբ և թէ նոյն իսկ միաբանից արդեանց ժամուցով:

Իսկ այն մեղադրանքը թէ այժմ անուշադիր է թողված եկեղեցին ուսումնարանի մէջ գործող երիտասարդութիւնից, իբր թէ սա չէ մասնակցում կամ աշխատում երեցփոխանի ընտրութեան համար, բոլորովին անհասկանալի է: Որովհետև այդ գործում մի անձնաւորութեան կամ խմբի աշխատութիւնը նշանակութիւն չունի, քանի որ, համաձայն մեր եկեղեցւոյ կանոնների, երեցփոխանի ընտրութիւնը կատարվում է միմիայն եկեղեցւոյ ժողովրդականների միջնորդութեամբ և նրա բարի ցանկութեամբ: Այս դէպքում ոչ երիտասարդութիւնը և կարծում ենք և ոչ հայր Մուշեղը չեն ցանկանայ խախտել հայ եկեղեցւոյ այդ ժողովրդական արտօնութիւնը: Իսկ ընտրութեանը մասնակցելու համար հարկաւոր է լինել եկեղեցւոյ կամ ժամաւոր կամ ծխական ժողովուրդ, մինչդեռ սուրբ. Գայիանեան ուսումնարանում գործողները կարող են լինել ոչ մէկը և ոչ էլ միւսը:

Նոյնպէս անհասկանալի է հայր Մուշեղի նամակի այն պարբերութիւնը թէ երիտասարդութիւնը չռայլաբար ծախսել է եկեղեցւոյ հազար և 10 հազարները: Այս կէտը կարծում ենք որ ինքն արժանապատիւ հայրը մոռթ կը համարէ և կաշխատէ բացատրել հասարակութեան առաջ, որովհետև հայ հասարակութեան լաւ է յայտնի որ սբ. Գայիանեան ուսումնարանի վարչութիւնը իր գումարների վերաբերմամբ ոչ թէ չռայլ չէ եղած, այլ ընդհակառակն շատ էլ խնայող, ըստ որում յընթացս 14 տարվայ իր ձրիաբար դասաւութեամբ տնտեսել է սեպհական դրամագլուխս 15 հազար ր. չը հաշվելով բարերարական նուէրներ, որոնց հետ միասին ամբողջ դրամագլուխը հասնում է 30 հազար ր: Արդեօք եկեղեցւոյ որ գումարներ է նա չռայլաբար ծախսել, մինչ դեռ սբ. Գայիանեան ուսումնարանի վարչութիւնը եկեղեցւոյ գումարների հետ բնաւ գործ չէ ունեցել:

Ուսումնարանի վարչութիւնը աւելորդ կը համարէր արժանապատիւ հայր Մուշեղի գրվածքին պատասխանել, եթէ նա հայ հասարակութեանց զարգացման աստիճանն աչքի առաջ ունենալով երկիւղ չը կրէր, որ այդպիսի գրվածքները կարող են սառեցնել ժողովրդեան եռանդն ու համակրութիւնը դէպի ուսումնարանը, որ վարչութիւնս բազմամեայ տոկուն և անչահասէր աշխատութեամբ ձեռք է բերած և որ ուսումնարանի ապագայ հաստատութեան գրաւականն է և մշտական դրամագլուխը:

Ի դիմաց ուսումնարանի վարչութեան անդամ նորա Ազէքսանդր Քիշմիշեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԴԷՐԲԷՆՏԻՑ մեզ խնդրում են տալ հետևեալը «Դերբէնտի հայոց ծխական երկսեռ դպրոցի հոգաբարձութիւնը հրապարակաւ շնորհակալութիւն է յայտնում պ. պ. Յովհաննէս Փանանդեանցին և Կարապետ Սպանդարեանցին, որոնք նուիրեցին յօգուտ դպրոցի, առաջինը 100 բուբլ, իսկ երկրորդը 25 ր.: Հասարակութիւնը մեծ յոյս ունի, որ պարոնները շարունակելու են իրանց նուիրատուութիւնները յօգուտ ազգի և եկեղեցու»:

—

Նոյն տեղից մեզ գրում են, նոյեմբերի 14-ից հետևեալը: «Այսօր ութերորդ օրն է, որ անդադար յորդ անձրևներ են գալիս և բաւական շատ տներ, որոնք ցեխով են շինված, քանդվել են: Բոլոր այս անձրևային օրերը բէօմիւրի ջերմաչափը ցերեկով ցոյց էր տալիս 8 աստիճան տաքութիւն: Հացի ցանքերը առատ հոնձ են խոստանում»:

—

Խորէն ծ. վարդապետ Ստեփանէ խնդրում է մեզ տպել հետևեալ յայտարարութիւնը: «Առաջիկայ 1884 թուի յունվար ամսից պիտի հրատարակվի իմ խմբագրութեամբ «Մանկավարժանոց» ամսագիրը, գլխաւորապէս մանկավարժական ուղղութեամբ: «Մանկավարժանոցը» պիտի աշխատէ հայոց դպրոցին, իբրև բարոյական և մտաւոր սրբավայրին, դպրոցի մէջ աշխատողների և ամեն դպրոցասէր ընթերցողին օգտաւէտ լինել: Այս նպատակին հասնելու համար հրաւիրում ենք աշխատասէր ուսուցիչներին, որոնց օգտաւէտ մտքերի, ազնիւ ձգտումների և կարիքների մշտապատրաստ թարգման լինել կը ցանկայ «Մանկավարժանոցը» աջակցել մեզ մեր գործունէութեան մէջ: Մեր ամսագիրը կը հրատարակվի ամիսը մի տետրակ, 2 թերթից բաղկացած, տարեկան 10 տետրակ: Ամառվայ արձակուրդներին, յուլիս և օգոստոս ամիսներում չի հրատարակվի: Մանկավարժանոցի» տարեկան գինը 3 բուբլ է: Մինչև յունվար ամիս ստորագրվողներին, յունվարի 1-ին կուղարկվի մեր յօրինած պրոգրամների զրքոյկը: Ամենայն պահանջ և խնդիր ուղղելու է այս հասցէով. Эчміадзинъ, въ редакцію „Манкаваржаноцъ“. Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրվել Մով. Վարդանեանի տպարանում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինի լրագիրները զգուշութեամբ վերաբերվեցին գահական ճառին, բայց նրանք ուրախութեամբ խօսում են ճառի այն տեղի մասին, ուր ասված է, թէ խաղաղութիւնը ապահոված է:

—Բէլգրադից լրագիրներին հաղորդում են, որ այնտեղ հասել են արմատական կուսակցութեան մի քանի անդամներ, որոնք առաջնորդում են բազմաթիւ պատգամաւորութեանը և պէտք է թագաւորին հպատակութեան և հնազանդութեան ուղերձներ ներկայացնեն: Ասում են, որ սկուպշինան կարձակվի դեկտեմբերին և նոր ընտրութիւնները գարունքից առաջ չեն ակվի: Նոյեմբերի 23-ին Բէլգրադի մէջ կը դատվեն արմատական կուսակցութեան մի քանի պատգամաւորներ: Կրուշեվացի մէջ մեծ քանակութեամբ զօրքեր են կենտրոնացած: Պալատը ձմեռը Նիշի մէջ կանցկացնի:

—«National Zeitg.» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ լորդ Դիւֆերին Կ. Պոլիս վերադարձալուց յետոյ աւելի խաղաղ քաղաքականութեան է հետևում: Նա պահանջում է, որ նահանգապետներ այնպիսի անձինք նշանակվեն, որոնք յայտնի են իրանց բարոյականութեամբ:

—«National Zeitg.» լրագրին հաղորդում են Փարիզից, որ նոյեմբերի 21-ին Ժիւլ Ֆէրրի, իբրև արտաքին գործերի մինիստր, առաջին անգամ ընդունեց դիպլոմատիական բաժնի անդամներին: Այդ ընդունելութեան ժամանակ նա մի ճառ արտասանեց, որով յայտնեց, թէ հանրապետական կառավարութիւնը ձգտում է բացառապէս խաղաղ նպատակների և աշխատում է հաշտութեամբ վերջացնել Չինաստանի հետ ծագած վէճերը, որքան կը ներէ Ֆրանսիայի պատիւը և արժանաւորութիւնը: Բայց «Temps» լրագրի կարծիքով, հարցի այդպիսի լուծումն հազիւ թէ կարելի է, որովհետև չինական կառավարութիւնը մերժում է Ֆրանսիայի առաջարկութիւնները Տօնկինի վերաբերութեամբ և պահանջում է, որ իր պայմանները ընդունվեն, իսկ այդ պայմանները թէ ֆրանսիական կառավարութիւնը և թէ ազգային ժողովները անիրագործելի են համարում: «National Zeitg.» լրագրի կարծիքով, ֆինանսների մինիստրը իր առաջ շատ աշխատանքներ ունի, որովհետև պատգամաւորների ժողովի մէջ արդէն ձայներ են լսվում, որ կառավարութեան պահանջած կրեդիտը փոքր է և որ դարձեալ նոր գումարներ պէտք է նշանակել արշաւանքին հարկաւոր ոյժը տալու և նպատակին աւելի հեշտութեամբ հասնելու համար:

—Փարիզից «National Zeitg.» լրագրին հաղորդում են, որ սպանիական դեսպան մարշալ Սէրրանօ տեսնվեցաւ Ժիւլ Ֆէրրիի հետ և մասնաւոր այցելութիւն գործեց Ժիւլ Գրէվիին: Մարշալ Սէրրանօ շտապում է հաստատացնել ֆրանսիական կառավարութեանը, որ նրա հայրենիքը կամենում է բարեկամական համաձայնութիւն կայացնել Ֆրանսիայի հետ և յայտնում է իր համակրութիւնը: Գերմանական թագաժառանգի ճանապարհորդութեան մասին մարշալ Սէրրանօ զգուշութեամբ էր խօսում: «National Zeitg.» լրագիրը ծաղրելով նկատում է, որ սպանիական դեսպանը քաղաքական նշանաւոր բոլոր գործիչների վիճակին ենթարկվեցաւ և լրագրական բէպզորտէօրները այնպիսի խօսքեր նրան վերաբերեցին, որ նա երբէք չէ արտասանել:

—«National Zeitg.» լրագիրը հաղորդում է, որ իշխան Բիսմարկի առողջութիւնը վատացել է և որ նա ստիպված է դարձեալ անկողին մտնել:

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ եգիպտական զօրքերի կրած ջարդը սուտ մարգարէից ծանր տպաւորութիւն գործից Գերմանիայի մէջ, որովհետև այդ զօրքերի հետ կամաւորապէս միացել էին գերմանական 10 օֆիցերներ:

—Անգլիական զօրքերի հրամանատարը Եգիպտոսի մէջ, գեներալ Ստէֆէնսօն, հեռագրով հրաման ստացաւ իր կառավարութենից մնալ Կայիրէի մէջ և զինուորներին նաև չը նստացնել մինչև նոր հրամանի ստանալը:

—«Standard» լրագրի կարծիքով եգիպտական զօրքերի յաղթվելը կարող է դժուարութիւններ պատճառել ոչ թէ միայն անգլիական կառավարութեանը, այլ և նոյն իսկ Եգիպտոսին: Անգլիան պէտք է աշխատէ ազատել Սուդանի զօրքերի մնացորդը ու այնուհետև կանգնել խեդիվի և Մահդիի մէջ: Սուտ մարգարէ Մահդի չի համարձակվի արշաւել Կայիրէի վրա: Լրագիրը կարծում է, որ անգլիական զօրքերին պէտք է թողնել Եգիպտոսի մէջ:

—Լոնդոնից «Berliner Börsen Courier» լրագրին գրում են, որ այնտեղ շատ են անհանգստանում Ուէլսի իշխանի Իրլանդիա ճանապարհորդելու առիթով: Անհանգիստ տարրերը այնտեղ դեռ ևս չեն ճնշված և նրանք օգուտ կը քաղեն անգլիական թագաժառանգի ներկայութենից իրանց գոյութեան մասին յայտնելու համար: Լորդ Սպէնսէր իր վրա մեծ պատասխանատուութիւն է առնում թագաժառանգին հրաւիրելով մի անհանգիստ երկիր:

—Նոյեմբերի 12-ին սպանիական դեսպան մարշալ Սէրրանօ ներկայացրեց իր հաւատարմագրերը հանրապետութեան նախագահին և այդ առիթով արտասանեց հետևեալ ճառը. «Թագաւորը յանձնեց ինձ յայտնել, որ սրտանց ցանկանում է բարգաւաճութիւն և բարօրութիւն Ֆրանսիային և նրա նախագահին: Ես իմ կողմից համոզված եմ, որ երկու երկիրների բարեկամական յարաբերութիւնները շահաւէտ են նրանց համար և որքան էլ նրանք միմեանց կը համակրեն, այնքան էլ աւելի կը զարգանան բարեկամական այդ յարաբերութիւնները: Ես ամեն կերպ կաշխատեմ արտայայտել իմ թագաւորի, կառավարութեան և հայրենիքի բարեկամական զգացմունքները:» Գրէվի սիրալիր ընդունելութիւն արաւ դեսպանին և ասաց, որ իր յանձնարարութեան համար նա կարող է ամեն կերպ աջակցութիւն գտնել Ֆրանսիայի մէջ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 նոյեմբերի: Պետական բանկի մէջ նոյեմբերի 22-ին բացված ստորագրութիւնը 6% ոսկէ ընտայի դադարեցրած է նոյն օրը, որովհետև այդ օրը ծախվեցաւ բոլորը, որ նշանակված էր Ս. Պետերբուրգի համար: Դեկտեմբերի 8-ին կը փակվի Վիտեբսկի և Մոգիլէօվի միացեալ պալատան և կը բացվին Վիտեբսկի և Մոգիլէօվի նահանգական դատարանները: Ամու-Դարիայի արշաւանքի ուղղագծող աշխատանքները վերջացրած են: Ամու-Դարիայի մէջ ջրի թողնելը հին ընթացքով կարելի է համարված: „Русь“ լրագրի դադարման մասին լուրը անհիմն է: Այդ լրագիրը կը հրատարակվի 1884 թուականին առաջվայ չափով և ուղղութեամբ: Սահնակի ճանապարհ կազմվեցաւ: Նեվա գետի վրա սառուց է լողում: „Journal de St. Petersbourg“ լրագրի խօսքերի համեմատ անհիմն են արտասահմանի լրագիրների լուրերը, իբր թէ կառավարութիւնը Ս. Պետերբուրգի մէջ առանձին յանձնաժողով է կազմել մի նախագիծ կազմելու համար ներքին քաղաքական կազմակերպութեան մասին: Նոյն լրագիրը ասում է, որ Ս. Պետերբուրգի մէջ ոչինչ յայտնի չէ պետութիւնների, որոնց թւում և Ռուսաստանի, համաձայնութեան մասին չինական ջրերը ընդհանուր նաւատորմ ուղարկելու համար:

ՊԵՐՄ, 23 նոյեմբերի: կամա գետը սառուցով ծածկվեցաւ: Սահնակի ճանապարհ է կազմվել:

ՓԱՐԻԶ, 23 նոյեմբերի: Իշխան Օրլով ուղևորվեցաւ Մոնտէօ Գիրսի մօտ: Պարլամենտական առանձին յանձնաժողովը որոշեց՝ մերժել արմատական Ցալանդիէի առաջարկութիւնը Բէրէօզովսկուն ներելու մասին, որը 1867 թուականին Փարիզի մէջ փորձ գործեց Ռուսաց Հանգուցեալ Կայսրի կեանքի դէմ:

ԲԵՐԼԻՆ, 23 նոյեմբերի: Սերգիյ Ալէքսանդրովիչ և Դմիտրի Կոնստանտինովիչ Մեծ իշխանները նոյնպէս և գերմանական դեսպանը՝ ռուսաց կառավարութեան մօտ՝ Շվէյցից երէկ ուղևորվեցին Ս. Պետերբուրգ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակի, ամսոյս 27-ին, ՎԱՆԱՑ ԱՒԱԳ եկեղեցում պիտի կատարվի հոգեհանգիստ հանգուցեալ ՄԻՔԱՅԷԼ ԱՒԵՏԻՔԵԱՆ ՂՈՒԶԻՆԵԱՆՑԻ համար, սրա մասին յայտնելով հանգուցելոյ ազգականներին և ծանօթներին՝ խնդրում ենք շնորհ բերել նոյն եկեղեցին կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին:

Վանաց աւագ եկեղեցւոյ՝ Յովհաննէս աւագ քահանայ Սարգսեանց:

1—1

Անգլիական հիանալի շոգենաւ

„ՍԻԴԵՆԴԱՄ“

հասաւ Բաթում և մօտաւորապէս դեկտեմբերի 10-ին կուղևորվի

ՀԱՄԲՈՒՐԳ

իսկ անգլիական երկաթէ շոգենաւ

ՐՕՆ

սպասվում է Բաթում 1884 թուականի մօտաւորապէս յունվարի 10-ին և կուղևորվի

ԼՕՆԴՕՆ ԿԱՄ ԼԻՎԷՐՊՈՒԼ

Ապրանքներ ուղարկելու համար դիմել Պ. Պ. ԷԼԼԷՐՍ ԲՈՒՐՀԱՐՏ և ԸՆԿ. Բաթում:

1—5

Ես իմ սեպհական **ԵՐԵՔ ՅԱՐԿԱՆԻ ՏՈՒՆԸ**, որ գտնվում է **ԲԵԴՂԵՀԷՄ** եկեղեցւոյ դաւթում, **ԾԱԽՈՒՄ ԵՄ ՄԱՏՋԵԼԻ ԳՆՈՎ**. ցանկացողները կարող են դիմել ինձ:

Յովհաննէս աւագ քահանայ **ՏԷՐ ԴԱՒԹԵԱՆՑ**

1—1

ԱՌԱՋԻՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՎՕՐՕՆՑՕՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ)

ՀԻՒԱՆԴՆԵՐԸ ԱՄԵՆ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ:

Ունի սենեակներ հիւանդների և ծերընդականների համար, օրական 2-ից մինչև 4 մանէթ և ամսական 50-ից մինչև 100 մանէթ վարձով: Երթևեկ հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.: Հիւանդանոցի բոլոր բժիշկների համախորհրդի (կոնսիլիում) համար 3 մանէթ, չքաւորները անվճար:

Հիւանդները ամեն օր ընդունվում են.

Առաւօտեան՝ 9—12 ժամ, ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—վիրաբուժական, վենէրական և ատամի ցաւերի համար:

10—10½ ժ. ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—մանկական և ներքին ցաւերի:

11—1 ժ. կին-բժիշկ ՍԱՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—կանանց, և երեխայոց ցաւերի:

10—11 ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ) ՐԷՑԽ—աչքացաւի:

11½—12½ ժ. (երկուշաբթի), ԲԱԲԱՑԵԱՆ—ներքին և ջղային ցաւերի:

Երեկոյեան՝ 5½—6½ ժ.—ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—ամեն օր:

ՍԱՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—երեքշաբթի և հինգշաբթի:

ԲԱԲԱՑԵԱՆ և ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—չորեքշաբթի և շաբաթ:

Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—6½—7½ ժամը երեկոյեան:

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ (բնակվում է նոյն հիւանդանոցում:)

ՀԱՄԱԽՈՐՀՈՒՐԴ, (կոնսիլիում) հիւանդանոցի բոլոր բժիշկների չորեքշաբթի և շաբաթ երեկոյեան 6½—7½ ժամը:—Հիւանդանոցի բժիշկները՝ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ, ՐՈՒԴԿՕՎՍԿԻ, ՍԱՐՕԿԻՆԱ—ՇՁԵՐԲԻՆԻՆԱ, ՐԷՑԽ և ԲԱԲԱՑԵԱՆ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ իր ներկայութեամբ այս թուի նոյեմբերի 30-ին ածուրդ նշանակելով 220 կուբ. սաժէն կոտրատած քարեր և 140 կուբ. սաժէն աւազ հասցնելու համար, յայտնում է դրա մասին յընդհանուր տեղեկութիւն, որ ցանկացողները վերցնել այդ կապալը՝ ներկայանան ածուրդին նշանակված օրը, առաւօտեան 11 ժամին: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է յընդհանուր տեղեկութիւն, որ այս տարվայ դեկտեմբերի 1-ին, առաւօտեան 12 ժամին, նրա ներկայութեամբ ածուրդ կը կատարվի կապալով աւլու Հաւլաբարի քաղաքային ամբարանոցը՝ դաջ պատրաստելու համար, 229 դեսեատին 1560 քառակուսի սաժէն տարածութեամբ, 1884 թուի յունվարի 1-ից մինչև 1887 թուի յունվարի 1-ը ժամանակամիջոցով:

2—3

Этикетъ утвержденъ Правительствомъ. Преслѣдуема поддѣлка будетъ строго закономъ

ПРИ ТРЕБ: ПОЧТОЙ ПРИЛАГАТЬ НА ОТПРАВКУ.

(5. 10. 25) 19—24

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԼՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՔՍԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՊ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ: Զեմոդաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակավայժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.:

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուլթաներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՑԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մեսալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի գդալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի գդալներ ֆրաժէի, մելխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.:

ՎԱՐՇԱՎԱՑԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի:

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոնները ռէվոլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ: Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը:

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. թէց Պոպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԴԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապոն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիտներ, գրչակոթեր, սուրգուչ, փօսաի թուղթ, ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում ես ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առևտրականներին գիջումն և առանձին պայմաններ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

80—100

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍ ՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն

90—100



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Ռիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ. .	6— 8	6—11 երեկ.	Գորի . . .	10—56	11— „
Միխայլօվօ.	6—23	6—33	Միխայլօվօ.	12—26	12—46
Գորի . . .	7—53	8— 2	Սուրամ. .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. . .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվօ.	1—50	2— 5	Գորի. . . .	6—30 երեկ.	6—41
Գորի. . . .	4— 6	4—30	Միխայլօվօ.	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ. . .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ ԵՒ ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . . .	10—24 երեկ.	—

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Ноября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.